


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2005թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում /վերլուծություն/

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 111886 գործարքներ, որոնց քանակը 2004թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 26.3%-ով, որը հիմնականում պայմանավորվել է անշարժ գույքի օրինականացման գործընթացի ակտիվացմամբ, մասնավորապես ինքնական կառուցված 16413 միավոր շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցմամբ:


2005թ. 11 ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված



գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 38864 օտարման գործարքների 87.7%-ը կազմել են առուվաճառքները, 11.7%-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 39.7%-ն արձանագրվել է Երևան քաղաքում իսկ 40.5%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2004թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 6.1%-ով: 2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 12883 առուվաճառքի գործարքների 65.2%-ը արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2004թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 3.4%-ով:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հունվար-նոյեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/	
		հունվար-նոյեմբեր 2005թ.	հունվար-նոյեմբեր 2004թ.
Կենտրոն	172100.0-435900.0	284500.0	246200.0
Արաբկիր	122900.0-314600.0	232400.0	193300.0
Քանաքեռ-Զեյթուն	63900.0-224700.0	142200.0	118800.0
Նոր-Նորք	56500.0-188700.0	133500.0	100900.0
Ավան	59000.0-157300.0	121700.0	96300.0
Էրեբունի	59000.0-179800.0	117400.0	96400.0
Շենգավիթ	59000.0-202200.0	142000.0	109800.0
Դավթաշեն	63900.0-202200.0	145300.0	120500.0
Աջափնյակ	59000.0-202200.0	137000.0	108900.0
Մալաթիա-Սեբաստիա	59000.0-202200.0	133100.0	108200.0
Նուբարաշեն	36900.0-112350.0	67500.0	42600.0
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	<b>36900.0-435900.0</b>	<b>150600.0</b>	<b>122000.0</b>

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գների տարեկան աճը կազմել է 23.4%:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում գրանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 4612 բնակարաններ, որոնց քանակը 2004թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 10.3%-ով:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական

գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հունվար-նոյեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/	
			հունվար-նոյեմբեր 2005թ.	հունվար-նոյեմբեր 2004թ
Արագածոտն	Աշտարակ	39300.0-72700.0	44300.0	35200.0
	Ապարան	14800.0-29200.0	20700.0	17900.0
	Թալին	12300.0-25000.0	19300.0	16000.0
Արարատ	Արտաշատ	27000.0-50000.0	34900.0	30300.0
	Մասիս	39300.0-68200.0	42000.0	32000.0
	Վեդի	24600.0-45400.0	25700.0	20900.0
	Արարատ	22100.0-45400.0	28800.0	20100.0
Արմավիր	Վաղարշապատ	54100.0-95400.0	67100.0	50200.0
	Արմավիր	29500.0-59100.0	40100.0	29800.0
	Մեծամոր	19700.0-36400.0	21100.0	17300.0
Գեղարքունիք	Սևան	19700.0-40900.0	24300.0	17900.0
	Գավառ	9800.0-29500.0	19100.0	17600.0
	Մարտունի	9800.0-68200.0	26600.0	18000.0
	Վարդենիս	4900.0-25000.0	13700.0	9400.0
	Ճամբարակ	6400.0-20400.0	9500.0	9600.0
Լոռի	Վանաձոր	14800.0-47700.0	36400.0	33700.0
	Ստեփանավան	9800.0-29500.0	20500.0	18900.0
	Մայիտակ	14800.0-45400.0	24100.0	18600.0
	Ալավերդի	7400.0-22700.0	15600.0	14000.0
	Տաշիր	7400.0-25000.0	17300.0	12500.0
	Թումանյան	4100.0-11400.0	5200.0	4900.0
	Շամլուղ	2300.0-8400.0	2800.0	2800.0
	Ախթալա	6800.0-16100.0	10400.0	10300.0
Կոտայք	Արոլյան	22100.0-90900.0	67800.0	50300.0
	Նոր Հաճն	24600.0-63600.0	47900.0	33800.0
	Բյուրեղավան	14800.0-50000.0	31200.0	22200.0
	Եղվարդ	17200.0-59100.0	39500.0	25100.0
	Հրազդան	14800.0-40900.0	26600.0	20400.0
	Ծաղկաձոր	19700.0-68200.0	51200.0	44000.0
Շիրակ	Զարենցավան	14800.0-38600.0	29500.0	20000.0
	Գյումրի	19700.0-54500.0	39300.0	39700.0
	Արթիկ	9800.0-31800.0	20900.0	15700.0
	Մարալիկ	8900.0-31800.0	17700.0	14400.0
	Գորիս	12300.0-59100.0	34500.0	18600.0
	Կապան	9800.0-36400.0	25900.0	17500.0
Սյունիք	Միսիան	9800.0-40900.0	23600.0	17600.0
	Մեղրի	8900.0-34100.0	18500.0	13700.0
	Ագարակ	8900.0-27300.0	15500.0	13600.0
	Քաջարան	6400.0-22700.0	13600.0	10400.0
	Դաստակերտ	4500.0-11400.0	6400.0	6700.0
	Վայք	19700.0-36400.0	24800.0	20100.0
	Եղեգնաձոր	12300.0-59100.0	35700.0	26400.0
Վայոց Ձոր	Զերմուկ	7400.0-81800.0	39000.0	25300.0
	Դիլիջան	18200.0-50000.0	28700.0	21400.0
Տավուշ	Իջևան	27300.0-72700.0	33500.0	25600.0

Բերդ	18200.0-45400.0	23000.0	16800.0
Նոյեմբերյան	9100.0-22700.0	13400.0	14700.0

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, 2004թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների տարեկան աճը կազմել է 28.8%:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության մարզերում գրանցված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 4559 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 1194, մյուս մարզերում միասին վերցրած՝ 3365: 2004թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 12.2%-ով, ընդ որում Երևան քաղաքում աճել է 3.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 16.8%-ով:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հունվար-նոյեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/	
		հունվար-նոյեմբեր 2005թ.	հունվար-նոյեմբեր 2004թ.
Կենտրոն	125400.0-908800.0	303100.0	251300.0
Արաբկիր	100800.0-454400.0	241900.0	197100.0
Քանաքեռ-Զեյթուն	68800.0-272600.0	145700.0	119600.0
Նորք-Մարաշ	59000.0-454400.0	174600.0	179400.0
Ավան	61500.0-363500.0	125500.0	97500.0
Էրեբունի	63900.0-227200.0	120700.0	97700.0
Շենգավիթ	59000.0-204500.0	144500.0	110500.0
Դավթաշեն	68800.0-409000.0	149400.0	121300.0
Աջափնյակ	61500.0-272600.0	141300.0	110000.0
Մալաթիա-Սեբաստիա	61500.0-409000.0	136200.0	109100.0
Նուբարաշեն	32000.0-113600.0	71300.0	43300.0
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	<b>32000.0-908800.0</b>	<b>159500.0</b>	<b>130600.0</b>

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գների տարեկան աճը կազմել է 22.1%:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում գրանցված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/

գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Սարգեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հունվար-նոյեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/	
			հունվար-նոյեմբեր 2005թ.	հունվար-նոյեմբեր 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	29500.0-81800.0	46900.0	45600.0
	Ապարան	12300.0-36400.0	21800.0	21000.0
	Թալին	9800.0-36400.0	20600.0	17200.0
Արարատ	Արտաշատ	24600.0-50000.0	35900.0	33400.0
	Մասիս	24600.0-68200.0	43100.0	34100.0
	Վեդի	12300.0-40900.0	27700.0	23000.0
	Արարատ	9800.0-45400.0	30000.0	21800.0
Արմավիր	Վաղարշապատ	39300.0-81800.0	68200.0	51800.0
	Արմավիր	17200.0-59100.0	41300.0	31400.0
Գեղարքունիք	Սևան	9800.0-40900.0	26400.0	20400.0
	Գավառ	9800.0-36400.0	20800.0	21500.0
	Մարտունի	9800.0-45400.0	28500.0	19700.0
	Վարդենիս	7400.0-31800.0	15700.0	11500.0
	Ճամբարակ	7400.0-22700.0	11100.0	11000.0
Լոռի	Վանաձոր	24600.0-50000.0	37700.0	37500.0
	Ստեփանավան	7400.0-36400.0	26000.0	20700.0
	Սպիտակ	9800.0-36400.0	25200.0	19500.0
	Այվազ	7400.0-31800.0	16800.0	14600.0
	Տաշիր	7400.0-31800.0	18600.0	13000.0
	Թումանյան	4900.0-18200.0	6400.0	5400.0
	Շամլուղ	2500.0-13600.0	4000.0	6300.0
	Ախթալա	9800.0-22700.0	11500.0	11100.0
Կոտայք	Աբովյան	34400.0-90900.0	69700.0	52600.0
	Նոր Հաճն	19700.0-68200.0	49300.0	34300.0
	Բյուրեղավան	12300.0-45400.0	32200.0	23000.0
	Եղվարդ	19700.0-63600.0	41100.0	26800.0
	Հրազդան	12300.0-40900.0	28600.0	22700.0
	Ծաղկաձոր	34400.0-68200.0	53800.0	48300.0
	Չարենցավան	12300.0-45400.0	31500.0	20500.0
Շիրակ	Գյումրի	29500.0-59100.0	43300.0	49200.0
	Արթիկ	9800.0-40900.0	22400.0	16600.0
	Մարալիկ	7400.0-36400.0	19000.0	14700.0
Սյունիք	Գորիս	9800.0-59100.0	35400.0	19400.0
	Կապան	9800.0-40900.0	27400.0	18200.0
	Միսիան	9800.0-40900.0	24500.0	18100.0
	Մեղրի	7400.0-36400.0	19800.0	15200.0
	Ագարակ	7400.0-36400.0	17100.0	15000.0
	Դաստակերտ	4900.0-18200.0	8000.0	7400.0
Վայոց Ձոր	Վայք	9800.0-36400.0	26000.0	20800.0
	Եղեգնաձոր	17200.0-59100.0	37300.0	27300.0
	Ջերմուկ	12300.0-40900.0	27100.0	23600.0
Տավուշ	Դիլիջան	9800.0-45400.0	31800.0	23800.0
	Իջևան	17200.0-45400.0	34600.0	26000.0
	Բերդ	9800.0-40900.0	23800.0	17400.0
	Նոյեմբերյան	9800.0-31800.0	14600.0	16600.0

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների տարեկան աճը կազմել է 24.2%:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

Ընդհանուր առմամբ, 2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել են 16802.19 հա /այդ թվում 277.39 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 15973.91 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում, 16341.11 հա հողերի /այդ թվում 266.20 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 15588.75 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել են նաև 48 միավոր /54.27 հա/ արդյունաբերական օբյեկտների հողեր և 9 միավոր /7.77 հա/ հատուկ պահպանվող տարածքների հողեր:

Օտարված 438.12 հա /այդ թվում 6.86 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 368.66 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ 22.96 հա հողերի նկատմամբ՝ փոխանակության գործարքներ /այդ թվում 4.33 հա Երևանում/, որից 16.51 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 11182.77 հա, որից 11108.67 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Ստորև ներկայացվում են 2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին մարզերում հողերի առուվաճառքի քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն վարձակալության իրավունքի վաճառքի, արդյունաբերական օբյեկտների և հատուկ պահպանվող տարածքների հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>						<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	204	53.98	120	99.31	0	0.00	798	78.94	157	33.51
Արագածոտն	108	661.59	10	1.21	12	0.14	536	364.89	366	37.60	4	0.02
Արարատ	541	1025.06	314	31.00	65	3.16	1025	587.17	617	57.31	4	0.07
Արմավիր	937	8617.31	8	0.94	91	1.74	1041	2491.36	478	45.63	14	1.07
Գեղարքունիք	31	113.49	31	4.11	5	2.75	103	65.96	80	13.70	3	0.95
Լոռի	0	0.00	5	0.66	7	0.41	270	177.96	66	8.41	9	0.09
Կոտայք	146	215.25	42	3.41	24	7.61	977	525.95	1311	157.08	21	9.62
Շիրակ	144	46.37	100	4.11	59	1.56	193	197.74	82	9.41	5	0.05
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	170	200.93	17	1.60	0	0.00
Վայոց Ձոր	109	109.68	0	0.00	20	3.74	73	56.95	27	3.88	0	0.00
Տավուշ	14	17.03	38	3.28	8	4.46	146	114.06	35	3.56	1	0.02
<b>Ընդամենը</b>	<b>2030</b>	<b>10805.78</b>	<b>752</b>	<b>102.70</b>	<b>411</b>	<b>124.88</b>	<b>4534</b>	<b>4782.97</b>	<b>3877</b>	<b>417.12</b>	<b>218</b>	<b>45.40</b>

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են հողերի 11880 առուվաճառքի գործարքներ /2004թ նույն ժամանակամիջոցում՝ 9776/, այդ թվում 6564-ը՝ գյուղատնտեսական նշանակության /4702/, 5259-ը՝ բնակավայրերի /5020/, 48-ը՝ արդյունաբերական օբյեկտների /50/ և 9-ը՝ հատուկ պահպանվող տարածքների հողերի /4/ նկատմամբ:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հողերի առուվաճառքներից 3020-ը իրականացվել են աճուրդների միջոցով /2004թ նույն ժամանակամիջոցում՝ 2204/, այդ թվում 204-ը՝ /91.42 հա/ Երևանում /460/, իսկ 2816-ը՝ /10824.02 հա/ մյուս մարզերում /1744/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 2013 միավորը /10733.28 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական նշանակության /2004թ նույն ժամանակամիջոցում՝ 724/, 697-ը՝ /95.87 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /1346/, 287-ը՝ /62.03 հա/ հասարակական կառուցապատման /124/, 23-ը՝ /24.26 հա/ արդյունաբերական օբյեկտների /7/ հողեր:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևանում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 1 գործարք:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրված 6564 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 2013-ը իրականացվել են աճուրդների, 129-ը՝ դատարանի վճիռների և 17-ը՝ ուղղակի վաճառքների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	105	645.36	22.5	3334.1	247.2	431	216.06	393.4	6874.5	1821.9
Ապարան						14	6.43	98.3	779.1	293.5
Թալին						76	112.44	98.3	769.9	235.0
Ծաղկահովիտ						15	29.96	83.6	962.4	130.7
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	266	249.18	9.5	13750.1	1222.8	455	203.27	363.9	5499.6	1081.2
Մասիս	109	163.48	27.0	5000.7	463.2	245	118.45	196.7	6874.5	1202.4
Վեդի	162	562.66	19.9	2557.5	511.7	304	256.11	221.3	4583.0	748.2
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	241	501.19	8.9	16487.2	372.9	392	604.73	319.6	4124.7	665.7
Բաղրամյան	384	7616.61	15.7	595.3	110.0	209	1627.55	98.3	687.5	374.4
Վաղարշապատ	312	499.52	11.4	8179.5	466.4	391	219.97	481.9	9166.0	1113.1
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						4	1.35	206.5	504.1	298.2
Ճամբարակ	29	109.09	123.0	949.7	317.6	12	9.81	49.2	550.0	111.9
Մարտունի						62	11.92	49.2	1833.2	409.8
Սևան						1	0.10	49.2	458.3	176.4
Վարդենիս						24	42.78	29.5	540.8	151.1

Լոռու մարզ										
Ալավերդի						45	18.86	177.0	2520.7	362.2
Գուգարք						41	14.22	245.9	2749.8	846.9
Սպիտակ						12	3.72	245.9	1512.4	470.1
Ստեփանավան						52	39.55	88.5	2291.5	252.9
Տաշիր						73	56.06	49.2	458.3	158.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	3	3.57	44.9	525.3	338.5	481	151.44	295.0	11457.5	2641.2
Եղվարդ	13	67.60	120.4	770.4	273.7	400	320.58	186.8	11457.5	1815.4
Հրազդան	130	144.07	81.7	1360.5	335.2	91	52.15	122.9	2749.8	587.8
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	0.02	1650.2	1650.2	1650.2	103	98.11	270.4	1718.6	348.9
Ամասիա						10	21.91	39.3	240.6	84.4
Անի						36	30.70	118.0	366.6	172.1
Աշոցք						20	25.92	29.5	114.6	89.4
Արթիկ	135	44.23	105.4	1319.7	495.9	24	21.09	68.8	1099.9	140.3
Սյունիքի մարզ										
Գորիս						35	23.78	98.3	733.3	275.5
Կապան						20	14.27	59.0	916.6	201.9
Մեղրի						14	2.18	196.7	1943.2	405.4
Սիսիան						95	159.04	44.3	687.5	163.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	96	84.91	61.5	361.4	204.3	45	26.63	127.8	2749.8	1156.6
Վայք	13	24.77	116.8	1081.1	266.5	27	30.17	59.0	1558.2	450.4
Տավուշի մարզ										
Բերդ						39	12.49	49.2	916.6	308.9
Իջևան	14	17.03	316.7	685.3	418.0	18	9.44	260.6	1833.2	728.3
Նոյեմբերյան						89	92.13	49.2	3822.2	367.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրված 3627 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքներից 542-ը իրականացվել են աճուրդների, 6-ը՝ ուղղակի վաճառքների և 27-ը՝ դատարանի վճիռների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	7	8400.0	36.0	143.9	116.7	343	342753.0	122.9	3666.4	1846.5
Ապարան						9	12610.0	122.9	641.6	157.8
Թային	3	3718.0	110.1	116.9	115.7	11	16915.0	49.2	366.6	67.0
Ծաղկահովիտ						1	520.0	49.2	366.6	64.1
Արարատի մարզ										
Արտաշատ	204	212447.0	37.7	509.6	238.0	119	134728.6	147.5	2749.8	670.4



Մասիս	83	69117.0	240.5	1897.0	444.1	385	324993.0	147.5	9166.0	812.9
Վեդի	26	28300.0	46.7	263.1	143.7	109	108736.0	122.9	1008.3	480.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	7	9200.0	92.2	159.0	149.8	127	160294.8	147.5	2291.5	750.1
Բաղրամյան						9	10200.0	88.5	275.0	105.4
Վաղարշապատ	1	249.0	1027.7	1027.7	1027.7	339	283536.0	147.5	4583.0	1091.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						20	21180.5	147.5	916.6	298.8
Ճամբարակ	22	31750.0	18.7	154.5	106.3	1	571.0	49.2	137.5	73.3
Մարտունի	4	4000.0	57.6	115.2	85.5	30	38050.0	98.3	458.3	140.5
Սևան	5	5320.0	113.4	680.8	380.0	4	9480.0	98.3	916.6	119.1
Վարդենիս						25	67673.0	49.2	229.2	61.2
Լոռու մարզ										
Ալավերդի						5	7090.0	73.8	275.0	96.2
Գուգարք						39	48551.0	73.8	2383.2	436.4
Սյիստակ						12	15660.0	68.8	458.3	95.7
Ստեփանավան	4	6200.0	39.3	276.4	157.9	4	3054.0	49.2	275.0	73.3
Տաշիր						1	1130.0	49.2	137.5	61.9
Կոտայքի մարզ										
Արույան	18	14500.0	120.2	1402.1	718.1	548	511138.0	147.5	6874.5	1327.0
Եղվարդ	2	2000.0	138.8	138.8	138.8	640	926562.0	147.5	6874.5	1453.6
Հրազդան	22	17589.0	4750.0	4752.2	4751.2	114	124763.0	147.5	9166.0	925.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	55	16008.4	175.2	4750.2	899.6	64	69756.0	122.9	1558.2	245.5
Ամասիա								49.2	137.5	61.9
Անի						3	5360.0	73.8	183.3	84.8
Աշոցք						1	5050.0	44.3	137.5	55.0
Արթիկ	44	25619.0	38.6	899.7	315.9	13	13294.0	73.8	939.5	112.3
Սյունիքի մարզ										
Գորիս						9	10114.0	73.8	550.0	194.4
Կապան						1	361.0	73.8	641.6	187.8
Մեղրի						2	830.0	73.8	412.5	105.4
Միսիան						4	4332.0	73.8	412.5	119.1
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						24	33144.0	73.8	1145.8	196.4
Վայք						2	3330.0	83.6	641.6	103.1
Տավուշի մարզ										
Բերդ								49.2	641.6	77.9
Իջևան	35	26009.0	98.3	260.4	211.0	28	29954.0	73.8	1374.9	307.6
Նոյեմբերյան						6	4900.0	49.2	641.6	96.6

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 93 գործարքներ 41.55 հա մակերեսով, ընդ որում 7-ը՝ Արագածոտնի /10.51հա/, 67-ը՝ Արարատի /19.54 հա/, 1-ը՝ Արմավիրի /0.12 հա/, 2-ը՝ Լոռվա /1.32 հա/, 9-ը՝ Շիրակի /8.80 հա/, 4-ը՝ Սյունիքի /0.69 հա/, 1-ը՝ Կոտայքի /0.17հա/ և 2-ը՝ Տավուշի /0.39 հա/ մարզերում:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 11047 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.9%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 22.5%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. նույն ժամանակամիջոցի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 34.9%-ով:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 483 բնակարանների, 242 բնակելի տների, 2558

հասարակական, 242 արտադրական նշանակության օբյեկտների, 39 ավտոտնակների և 7483 միավոր հողերի վարձակալության գործարքներ:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 386 վարձակալության գործարքների քանակները 2004թ. նույն ժամանակամիջոցի համեմատ նվազել են 27.0%-ով:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալվել են 33244.01 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 124.42 հա Երևանում/: Մյուս մարզերում վարձակալված հողերից 31632.07 հա կազմում են գյուղատնտեսական /որից 1589.89 հա նախկին պահուստային/, 806.33 հա բնակավայրերի, 275.48 հա արդյունաբերական օբյեկտների, 58.89 հա էներգետիկայի օբյեկտների, 19.15 հա անտառային, 109.91 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 5.88 հա տրանսպորտի օբյեկտների, 5.26 հա ջրային, 199.32 հա հատուկ պահպանվող տարածքների, 7.30 հա կոմունալ ենթակառուցվածքներ օբյեկտների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Կոտայքի մարզում՝ 6956.18 հա, որից 6861.41 հա գյուղատնտեսական նշանակության հողեր: Իսկ առավել փոքր մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց Ձորի մարզում՝ 522.13 հա, որից 508.00 հա գյուղատնտեսական նշանակության:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 18296.43 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ. հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ. հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	26	2434.80	636	2096.03
Արարատ	48	4049.03	281	2261.67
Արմավիր	0	0.00	97	1175.84
Գեղարքունիք	92	2469.70	582	1911.58
Լոռի	4	188.30	305	828.53
Կոտայք	63	5979.00	434	882.41
Շիրակ	14	1346.00	659	2290.20
Սյունիք	12	1254.00	180	1186.40
Վայոց Ձոր	2	75.60	213	432.40
Տավուշ	25	500.00	78	270.57
<b>Ընդամենը</b>	<b>286</b>	<b>18296.43</b>	<b>3465</b>	<b>13335.63</b>

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության մարզերում վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 8521 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.6%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել է 24.6%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 36.6%-ը իրականացվել են իրավաբանական անձանց կողմից

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /44.6%/, հասարակական նշանակության օբյեկտների /19.1%/, առանձնատների /16.1%/ և հողերի /14.6%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4320 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. հունվար-նոյեմբեր ամիսների համեմատ աճել է 24.9%-ով:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել են 2777.01 հա մակերեսով հողեր /այդ թվում՝ 63.56 հա Երևանում/, որից 2698.37 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 1934.82 հա, որից 1933.25 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 202 և 80 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.3%: 2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին 2004թ. նույն ժամանակամիջոցի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 15.3%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /24.1%:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության մարզերում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի կայունացման միտում:

2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 17945 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքների, որոնց քանակը 2004թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել է 19.4%-ով:

Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /47.9%/: Առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

## ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***